Լեռնային Ղարաբաղը բողոքում է Գորբաչովի հայտարարության դեմ

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը բացասաբար ընդունեց պրեզիդենտ Մ. Գորբաչովի դիմումը՝ ուղղված Ադրբեջանի ու ԼՂԻՄ-ի ժողովուրդներին:

Ուրբաթ օրը հազարավոր ստեփանակերտցիներ հավաքվեցին քաղաքի կենտրոնական հրապարակում, որտեղ կեսօրին տեղի ունեցավ հանրահավաք, որին մասնակցեցին 10 հազարից ավելի մարդ:

Ելույթ ունեցողները մեղադրեցին ԽՍՀՄ պրեզիդենտին այն հայտարարության համար, թե իբր ԼՂԻՄ-ը Ադրբեջանի անբաժանելի մասն է: Նրանց կարծիքով, դա Ադրբեջանի ղեկավարությանը հնարավորություն է տալիս ԼՂԻՄ-ի հայ բնակչությանը տեղահանելու: Մեկ ժամանց զորքը ցրեց հանրահավաքը: Բողոքի ցույցեր տեղի ունեցան նաեւ մարզի այլ շրջաններում: Ստեփանակերտի բոլոր ձեռնարկություններն ու ուսումնական հաստատությունները ի պատասխան Գորբաչովի հայտարարության՝ միօրյա գործադուլ հայտարարեցին: